



ՕՐԱԳԻՐ ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ

27 ԳԵՍԵՄԲԵՐ

ԵՐԿՐԱՐԻ ՏԱՐԻ 1861

ԹԻՒ 40

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԴԵՐՐ ԻՆՉՈՒՆ ԶԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԻ

Տարի ու կես է 'ի վեր' առանց իւր պայմանադրեալ ժամանակի շիտթելու՝ շարունակ հրատարակուած Արևելեան Դարը յանկարծ դադրելով՝ դրեթէ երկու ամիս է 'ի վեր չի հրատարակուելուն, և այս անգամ անոր վրայի պայմանադիրը ամբողջ վերցուած, ու Տարի քառիս տեղ Արևելեան մը դրուած ըլլալուն վրայ՝ կարելի է բաւական անձինք զարմացած, և ասոնց իսկական պատճառներն իմանալու հետաքրքիր եղած ըլլան:

Արդարև իրաւունք ալ ունին յայտ մասին յիշեալ անձինքը, ըստ որում... արդի պարագաները 'նկատելով' «չէր ժամանակ լուելոյ, այլ խօսելոյ», և հեռուարը «չէր ժամանակ փոփոխելոյ, այլ առաւել հաստատուն կալոյ» կ'ըսեն ու կը խորհին: Եւ վասն այսորիկ՝ Արևելեանին այգբան ատեն լուռ կենալէն յետոյ՝ այժմ կերպարանափոխ երևալուն վրայ զարմանալին, և հեռուարը ասոնց պատճառներուն խեղամտաւոր հետաքրքիր ըլլալին իրաւացի բան մը, և մանաւանդ պարտաւորութիւն մի է, քանի որ սկիզբէն անոր հաւատարիմ բաժանորդը գրուուեր, և իրենց տարեկան պարտքը վճարելու են՝ որով տարի մը ամբողջ անոր ընթացքն ու վիճակը հեռագրաւոր իրաւունքը ստացելու են, մանաւանդ նորին խմբագրին կողմէն խոստացեալ պայմանները ատենին 'ի դործ չի դրուած, և կամ յանկարծական կերպիւ անոր (Արևելեանին) վրայ արտաքոյ կարգի ընթացք մը, և փոփոխութիւններ անսնուած ատեն, ինչպէս է այժմեան վիճակը:

Մենք մեր կողմանէ զասոնք ըստ հարկի խորհելով, և այս մասին ունեցած պարտքերնիս քաջ ձանաչելով՝ ապաքէն կը հարկադրինք այս թուով թէ Արևելեանին երկու ամիսէ հետե

դադարեալ լուռ կենալուն, և թէ այս անգամ այս կարգ փոփոխութիւն մը կրելուն քանի մը սկզբնական ու վերջնական պատճառները՝ շուրջը -- ներքին եղող անձանց համար ըստ արժանոյն պարզել, (մեջ տեղերը՝ երբեմն այլաբանական խօսակցութիւններ յաւելցնելով), և այսուհետեւ ունենալիք ընթացքը անոնց ծանուցանել, որ ինչպէս 'Արեւմտեան 13 թուով հանած Յաւելուածնուս մեջ արդէն սակաւիկ մի խնացուցեր էինք:

Եւ սակայն սա ալ չի մոռնալք կանխաւ ծանուցանելու թէ, ասկէ ետքը ինչ որ պիտի գրենք ու հրատարակենք՝ նպատակնիս մեկու մը դէմ գանդատի, կամ գով կը մեղադրել չէ, (բան զի եղաւ ըլլալիք) այլ սրտերնուս կսկիծէն է, որ... գոնէ 'ի հրապարակ խօսելով՝ սակաւ ինչ մխիթարուիմք, եթէ գտնուէք մխիթարիչ մը:

Ինչպէս կրտե առածը թէ՛ բարեբաղէն է՝ երբեք գինի. ասոր նման այն բաները որ արտաքին տեսքով ոմանց առջին՝ մեզ համար երջանկութիւն կամ մեծ յաջողութիւն մի համարուած էր, ներքին նկատողութեամբ՝ անոնք մեզի նիւթապէս ու բարոյապէս բաւական նեղութիւններ պատճառելին յայտնելով, այս մասին այնպիսեաց ծուռ և սխալ դատարարներն ու դատողութիւնները ուղղենք. միանգամայն ըստ 'Բրիտանական պարտի մերոյ' 'ի սրտէ ներելով իրենց, զի եթէ չի ներենք՝ մեզի դէմ ջարդ (կարծեօք) խօսած ու գրած այն բաներովն մեծ սխալման ու հեռուար սոսկալի մեղաց տակ պիտի մնան, եթէ որ իրօք քրիստոնեայ կն, և սոսկում մը կզգան Փրկչին մերոյ սա ահռելի պատգամէն, որ կրտե. «Այս որ ասն բարեոյն չարո. և դարձեալ ըստ 'Բրիտանական' եթէ չեն ուղեր իրենց մեղացը մեջ յամաւելով՝ «բնական» կոչուիլ. զոր ինչպէս ասոնց ապացուցեալ ճշմարտութիւնները 'ի կարգին պիտի տեսնուի:

Եսնք հաս այսքան յիշելէն վերջը՝ դառնալք վերջիշեալ ինչորոց պատճառները պարզաբանե

լու : Բրդ՝ Երևելեանը այսքան ժամանակ չի հրատարակուելով՝ իր տասնօրեայ շրջանը շփոթե-
լուն գլխաւոր պատճառաց մէկը կարծեմք յայտ-
նի է, այսինքն՝ ինչպէս որ Պօլտոյ ամեն Օրագ-
րաց ու Լրագրաց՝ Բ. Գլուսն կողմէն սաստիկ
պատուէր եղած է թէ՛ մինչև նորհրամանի, (Հա-
յոց) Եզգալին ու Արծնական խնդրոց վայբառ-
մը անգամ՝ չարտասանենք*, այսպէս ալ սոյն
պատուէրը երկրորդապէս** Երևելեանին ու
Երևակին*** համար ՚ի գործ գրուած էր, ու
որով կերպիւ՝ մը՝ արն՝ եւ՝ Եկտեւ Բոյ՝ ու ին՝ ըս-
ուածը կատարեցաւ : Բայց ոմանք ետքէն այս
պատուէրին համեմատ չեն վարուեր եղեր,
այն մեզի պէտք չէ : մենք Քրիստոսի «Տուք
զկայսերն կայսեր» պատգամին ունկնդիր եղած՝
յիշեալ պատուէրին ամենայն ակնածութեամբ
հնազանդելով՝ ցարդ անոր կատարեալ գործադ-
րութեանը հետեւեցանք : Եւ թուի թէ այսու-
հետէ երբէք պիտի չի կարենամք զլանալ այս
հնազանդութենէ, ըստ որում Երևելեանը պար-
բերական օրագիր մը ըլլալուն, այժմեան քաղա-
քականութիւնը՝ յայս կարգ օրագրաց՝ մէկ ժա-
մանակ Եզգային ու Արծնական խնդրոց վայ
խօսիլը չի ներեր եղեր, (ըստ ծանուցանելոյ ՚ի
մեզ՝ լրագրաց մեծապատիւ Քննիչի,) որով
ըսել է թէ՛ Երևելեանը արդի վիճակովը մշտն-
ջենապէս յիշեալ պատուէրին ենթակայացեալ
պիտի մնայ, և ասանկով անոր ընթերցողները
մէկ ատեն անկէ՛ Արծնական և Եզգային (բայ ՚ի
«Եւստուծոյն Եստուծոյ» մասերէն) խնդիրներ
կամ լուրեր չի պիտի սպասեն : Իսկ ոմանք գան-
դատելով կըսեն եղեր թէ՛ մեր վիճակակիցները
ինչպէս կը գրեն կամ պիտի գրեն : ատոր ալ
պատասխանը մեր Օրային Սուրհանդակէն****

* Ըստ որում Հայոց ներկայ ցաւալի խռովութեանց
պատճառը յիշեալ Լրագրաց եւ Օրագրաց ոմանց
անխոհեմ վարմունքէն յառաջ եկած ըլլալուն՝ Բ.
Գլուսն քաջամասօթ եղած էր :

** Երկրորդապէս՝ զի այս միջոցիս՝ Արեւելեանէն
առաջ երկու Հոյ օրագիրներ, այս խնդրոյն նկատ-
մամբ Բ. Գլուսն հրամանաւոր բորբոսիին խափանուած
էր : Անկիայ հոս ծանուցանելիսու նպատակը՝ Օրա-
յին Էակին իստակցութիւններուն մէջ կիսացուի :

*** Ներեն մեզի Երևակը բերանմիս առնելուն .
քանզի երբեմն անոր գովելի ձիրքերը մեծարելիս
ոմանց առջին քրիական յանցանք է եղեր : ինչպէս
ծանոց մեզ աներեւոյթ էակը, ՚ի վայրին պիտի տես-
նուի :

**** Օրային Սուրհանդակը ով է . . . գիտողը գի-
տէ, եւ անս Արեւելեան Դար թիւ 1-2, խօսքեր-
նուս վերջը՝ վերստին անոր վրայօք ասկաւի մի
պիտի խօսակը :

ընդունին : զի մենք այս մասին անկէ գոհացու-
ցիչ պատասխաններ առինք : որ ինչպէս իւր խօ-
սակցութեանցը մէջ պիտի տեսնուի, երբ դա-
նոնք ՚ի լոյս հանենք : Թերևս կարելի է ոմանք
ալ ըսեն (և ինչպէս ալ ըսին) թէ՛ « եթէ ատանկ
է, ուրեմն Օրագիրը Քաղաքականութեան
գարնուր, որով կարենաս այն արտօնութիւննե-
րը ունենալ, զոր ունին Պօլտոյ ամեն Քաղա-
քական Լրագիրք » : Եւ յ՛, այս ալ իրաւացի
խնդիր մըն է, բայց կարծեմք տակաւին այս ա-
ռաջարկութիւնը մէկէ մը չեղած՝ մենք մեզէն
խորհեցանք փասն յօգուտ Երևելեանի, և նո-
րին յնթերցողաց, ինչպէս որ մեր այս կամքն
ու փափաքը հրատարակու յայտներ էինք : Եւ
այս գործը դուրիս հանելու համար ամեն աշ-
խատանք չի խնայելով՝ մեր կողմանէ պէտք ըլ-
լալիքները հոգայինք, օգնականներ ընտրեցինք,
և այն բաները որ քաղաքական լրագրութեան մը
յատկայեալ է՝ զանոնք կարգի դնելու համար
բաւական ծախք ալ ըրինք : բայց բոլոր ջանքեր-
նիս ՚ի գերեւ երաւ : Ինչու : Քանզի չի կրցանք
այն պէտք եղած հրամանն ստանալ, Պատման :
Ետոր բնական պատճառը չը գիտեմք, բայց (բա-
րոյապէս) սա քանը կրնամք խորհրդածել թէ՛ ցարդ
հրաման արուած լրագիրներէ ոմանք՝ իրենց սահ-
մանին մէջ չծառայելուն, և անով իւրեանց
իրական պաշտօնը՝ առած հրահանգնուն հա-
մեմատ չկատարելուն, մէկ ուրիշ մըն ալ նո-
րէն Լրագիր հրատարակելու, և կամ Պարբե-
րական թերթ մը Քաղաքականութեան դար-
ձունելու համար՝ ըստ օրինի հարկ եղած հրա-
մաններն ստանալու դժուարութեանց պատճառ
եղած են, ըստ որում իրենց այս ապօրինաւոր
վարմունքը՝ պեսպէս նեղութեանց ու կասկա-
ծանաց առիթ տուած է : որով այժմ այս կերպ
հրատարակութիւն մը ընելու համար մէկը՝ նախ
և առաջ գրոց քննութեան ատեաններու առ-
ջև, վերոյիշեալ ապօրինաւորութեանց չհետե-
ւելու համար հաստատ խոստանալներ տալու,
և մեծ երաշխաւորութիւններ յրցունելու հար-
կադրեալ եղած է :

Բայց և այնպէս այս միջոցիս՝ խոստանալքը ար-
դար, վարմունքը չար՝ եղ մը գրուածներ ՚ի հը-
րապարակ ելելով, և անոնք ուղղակի՝ մէջ տեղ
գայթակղութեան որոմներ ցանելու պատճառ
ըլլալուն, յիշեալ Երևաններուն՝ Հեղինակաց
վայէն հաւատարմութիւնը բողբոմին վերուցած
ըլլալը լաւ նշմարեցինք, որով այժմեան արուած

Քրիստոսիւ լուսաւորիմք՝ ՚ի Քրիստոսէ հե-
ւանաւք : Ա՛րքապէս՝ մեզի անթիւ և երկու
տեսակ բարիքներ պարգևող, և զմեզ պէս պէս
սխտերէ ու ցաւերէ ազատող Քրիստոս Աստ-
ուածը՝ կերպ կեերպ ամենայնեքով խաչեմք,
մեռցնեմք, և անոր երկխաւոր Հօրը Տաճարը
« այրս աւագակաց » բնելով, գայն քիչ ատենի
մէջ քակեմք . . . Իւր Աստուածորդւոյն մահ-
ուամբը վերստին կանգնուած, սրբուած, ու
յամենայնի մարբուած սոյն Տաճարը՝ նորանոր
պղծեմք, եթէ եւրի ըւրի՝ ՚ի հիմանց քանդելու
չանանք . . . Ինչո՞ւ ասոնք ո՞վ բերիար . . . Գի-
տեմք զիտեմք « Ա՛ւ և քեզ, զի այնքա մեռանիցի
՚ի վերայ բարեւորացի, և մի ամենայն ոչեմու-
նեմ կորիցէ . . . Կայիափան Կայիափան, զի՞նչ
մարդարեացար դու : Յիրաւի մարմնով մեռաւ
արեարն, իսկ հողով կենդանի՛ է անմահն, և
Տէր է ՚ի յերկինս և յերկրի, բայց դու և ամե-
նայն ազգդ քո կորեան յաւիտեան : Այն՝ Դա-
ւիթ, « Եղբա կորեան, և Դա կայ և մնայ յաւիտ-
եան » : Սակայն ի՞նչ է այն ո՞վ Դաւիթ՝ զոր դարձ-
եալ կը բարբառիս բերով, « Աչ են բանք և ոչ են
խօսք, որոց ոչ լին ձայնք նոցա : Ի՞նչ ամենայն
երկիր ել բարբառ նոցա, և մինչև ՚ի ծագս աշ-
խարհի են խօսք նոցա » : Այս բարբառդ զոր
Տանազեայ Քնարիւք քող յրանուաղ թելերուն
վայէն կը հնչէս, Քրիստոսի առաքելոց և ա-
շակերտացը համար չէ՞ մի . . . Այն դու դարեր
առաջ Հօգւով սրբով մարդարեացար սոցա հա-
մար, և անապար կատարեցաւ այն մարդարեու-
թիւնդ . . . Ահա սիռեցան Առաքեալք բոլոր
յաշխարհ (բայ ՚ի Յուդայէն զոր կորեաւ,) և
« կան քարոզելը Եւ անա « Ի՞նչ ամենայն երկիր
ել բարբառ նոցա . . . » : Բայց ի՞նչ կուզեն Աս-
տուակեցիք Պետրոսէն և անոր ընկերներէն : Ինչո՞ւ
կը բողոքին ճշմարտութիւն քարոզելուն վրայ . . .
Ի՞նչ իրաւամբ կը կշտամբեն Սաղուկեցւոց ժո-
ղովը զայդ Աստուծոյ մարդիկը ո՞վ Դաւիթ,
որոնք իրենց ճշմարիտ Արդապետէն ուսեալ,
և ՚ի շնորհս Հօգւոյն սրբոյ կը խօսին, և դու ալ
մարդարեացար թէ « Ի ծագս աշխարհի են խօսք
նոցա » : Արեմն ի՞նչպէս կրնան յանդիմիլ հրէից
դատաւորներն ասոնց հարցունելու թէ « Աչ պատ-
ուիրելով պատուիրեցաք ձեզ մի ուսուցանել Յա-
նուան յայն » : Եւ երբ առաքեալք հանդերձ
Պետրոսի « Հնազանդել պարտէ Աստուծոյ առա-
ւել, քան մարդկան » պատասխանած, և զորքին
Աստուած յանդրաւի ՚ի խաչ հանելին իրենց և

ընտր տուած ատեննին, ո՞ր իրաւունքով նոցա
լի բարիութեամբ զասոնք սպանանել կը խոր-
հին . . .
Ինչո՞ւ, ո՞վ խաւարեալքդ՝ ՚ի լոյս Աստուած
զխաւթեան ինչո՞ւ չէ՞ այդպէս զոր խօսեցանս
Ի՞նչ, միթէ կուզէք որ միայն երկխաւոր և ան-
ցական փառս խորհող, և այս պատճառի ըզ
Քրիստոս ՚ի խաչ հանողացը առջին խանարհի՛ն,
անարգելով Երկնային անանցանելի և երջան-
կայեց փառքերը, զոր ՚ի սոցանէ ունեք տեօին ՚ի
լեռան Ամոս . . . Ի՞նչ կը կործէք, ո՞վ մե-
լորեալքդ ՚ի հաւատոցս, կրնաք ատանկ կշտամ-
բելներով՝ ասոնք ալ ձեր ազանդովը մեղքոյքնել .
այսինքն՝ ապագային դալու սոսկ երկխաւոր, ան
ալ յուսացուածին պէս չբաւով, և անչքաղիք
փառքով մը երեւալու սուա Սեբաստացեցը-
նել, նախ ուրաջներով ասոնց՝ արդէն երկնային
սքանչելի փառք եկած, և սինչի ՚ի կատարած
աշխարհի իրենց հեա եղած՝ այն իսկական
ՄԵՍԻԱՆ, զորն որ պահ մ՛առաջ՝ այս
մարդիկը կենդանի աչօք անան, ձեռօք շոչա-
վիցին, ու անոր ճշմարիտ և անմահ Թագա-
ւորութեան շքեղապարզ փառաւորութիւնն
լուսն հանդիսատես եղան . . .
Եւ սակայն նայեցէք սա Վամաղիելը ի՞նչ
զեզեցիկ կը խօսի՝ անոնց չար խորհուրդին դէմ,
ո՞վ Խարայեղացիք (կրտ) իս մտիկ ըրէք . ատեն
մին ալ երկու մարդիկ եղան, ու կերպ կերպ
քարոզութիւններ ըզին . որոնց մեկին անունն էր
Թաւրոս և միւսին Յարութեոս, և ասոնք բա-
զուս ժողովուրդ ալ ունեցան իրենց կողմը, ա-
պստամբեցնելով զանոնք, բայց բարն ալ քակ-
տեցան, ջրուեցան, և անոնք որ անոնց հա-
ւանեալ էին՝ կորեան, և եղին յոյնք . . . « Աւ-
զարդիս ատեմ ձեզ (կը յաւելու) ՚ի բայց կացէք
յարանդը յայդցանէ, և թոյլ առք դոցա, զի
եթէ ՚ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ կամ
դործդ՝ քակտեցի . ապա թէ յԱստուծոյ է՝ ոչ
կարէք քակտել զդոսս, զուցէ և պատուածա-
մարտք գասնիցիք » : Բարի և յոյճ դռնիկ են
առաջնապէս այս խրատներդ ո՞վ Վամաղիել,
իսկ ետքէն ինչո՞ւ թողուցիք ասոնց, որ զանոնք
լու մը ձեծեն . . .
Գիտեմք Փարիսեցի, վասն անին հրէից չի
կրցար արդիւել կամ դէմ գնել . . . Բայց հող
մի բներ . եթէ դու ՚ի սրտէ վշտացար այս բա-
նիս՝ « Եղբա գնացին խնդրով յերեւաց ատենին
զի վասն անուան Տեառն արժանի եղին անար-

յօժարամտութիւնն ու շնորհքը ունիք նէ, առանց սա անմեղը չարչրկելու, հեղութեամբ հարցուցէք իրեն թէ ինչ է քարոզածը, ո՞վ է Մեսիան, և ինչ է անոր Արդապետութիւնը. ինչպէս հարցուցեր էր ատեն մը Հերովդէս ի Քրիստոս. Թէ որ ըսածները բաներ, նուր հուզայ, սիրով ընդունեցէք զանոնք, և փոխանակ անարգելու այս սրբազան Անձը, ըստ արժանոյն պատուեցէք, եթէ որ ինք պատիւ ընդունի. Իսկ ընդհակառակն եթէ ասոր քարոզածները ձեզի և ձեր՝ օրէնքին հակառակ հուզան, անմիջապէս արձրիեցէք զինքը, ինչպէս լուութեամբ արձրիեր էր Հերովդէս ըզր Քրիստոս, որ երթայ իր յատկական պաշտօնը զինք ընդունողներու քով կատարէ. . . . Բայց չէ, գիտեմք ձեր նպատակը, դուք Ստեփաննոսէն, աշխարհային փառքերու վայ քարոզութիւններ, և հետեւեալ լայն ու արձակ, և հոգևորէն անկախ օրէնք մը լսել կ'սպասէք, որպէս երբեմն Հերովդէս կերպիւ մը կ'սպասէր ի Քրիստոսէ. Ուստի անոր քարոզած (ըստ ձեզ) աչքբառ Մեսիան, և անոր երկնային Օրէնքի՝ ձեր բանին չեզար, ըստ որում դուք աշխարհասէր ըլլալովսիւզ, ի մարմնաւորս պերճացեալ սուտ Մեթի մը գառուն անկախու էք, և անոր կործանիչ օրէնքը ամենայն յօժարութեամբ պիտի ընդունիք. . . . Եւր քանի որ այս ասանկ է, դուք առանց ձեր գեղեցիկ գաղափարէն կէտ մը շեղելու, առաւել ևս հաստատուեցէք, խիղճն ու կամքը ձերն է. միայն թէ Ստեփաննոսըն ալ ազատ թող տուէք:

Չեմք գիտեր ա՛, թէ որ ձեր կատարի բարկութիւնը ինչապէս համար՝ ասոր պրոֆի մէկ անարգութիւն մը ընել կուզէք նէ՛ ըստ ձեր սովորութեան՝ վրան ձերմակ լա՛ծ մը ծածկած, իբր եպերանք մը՝ ատենանէն արտաքս հանեցէք, որ ժամանակ որ՝ Հերովդէս ըրած էր ասոր Արդապետին. Թող բանը Երկնից դատաւորին մնայ, այն որ կարող է անմեղները պաշտպանելու, ու յանցաւորները պատժելու. Բայց ի՞նչ. . . ինչո՞ւ ատամունքնիկ կը կրճտէք անոր վրայ. . . , միթէ սո՞ւտ խօսեցաւ, սխալ պատմեց. . . , միթէ ձեզ կ'պատմեցին չի հալածեցին՝ Մարգարէները, և գովանս չապրաններն, որոնք որ ասոր քարոզած Մեսիանին վրայ կը մարգարէանային. . . .

Գետ երեկուան օրս դուք չէիք սոյն Մեսիան մասնորն ու պէս պէս տանջանքն.

րով ու խայտառակութիւններով ՚ի խաչ հանողը. Անտարակոյս. Ուրեմն ինչո՞ւ կը զայրանաք. Թէ որ ըրածնիկ բո՛ւ էր, թողէք որ այն բո՛ւն ինքնիրեն իւր յաղթանակը կանգնէ, և դուք ալ անոր վրայ պարծենաք, իսկ եթէ չար ի՞նչպէս կը յանդգնիք՝ մեզս ՚ի վերայ մեղաց յաւելցնելով, այդ արդարին ճշմարտապէս ըրածներուն դէմ թշտ հանալու, և ատանկով Բեթլար անոր վրայ չարութիւններ խորհելու. . . . Ահ, Բեթլար. . . . Եւ սակայն ի՞նչ ազդակ է այդ և ի՞նչ եղաւ որ յանկարծ ականջնին կը խցեն ատոնք, ու ամենքն ալ Ստեփաննոսին վրայ կը յարձակին. . . . Ուր կը տանիք քաշկուտելով այդ անմեղը, ո՞վ անօրէններ ըսէք մեզ, զի՞նչ չարաբար սա. . . . Պիղատոսին չամի ալ խիղճ չունիք, խրատեցէք զգա և արձակեցէք. . . . Չէ, « Հայտնի է զի զորոտանկոր »

Ունէ գեմ. « Մարտիրոս » կը գոչեն կոր. Չեր օրինայը, Պարմանալու բան. . . . Եղէկ ա՛, կ'եղիք նայնք. այդ անձը ոչ թէ օրէնքի, այլ մարդու մը դէմ անգա՛հ չհայհոյեր. ըստ որում սաստիկ պատուիրեալ է իւր Արդապետէն բերանը հայհոյանք չառնելու. ինչ կրէք կոր դուք. Չըլլայ թէ գրուխնիդ չափէ դուրս տարքած ըլլալով անոր բերնէն ելած պաշտօնանքը հոն, հասկնաք, և ապագային, ըրածնուր վրայ զղձաք. Ուստի ձեզի իբրև յորդորանք մը կը գրուցեմք, եթէ հաճոյ կը թուի թիչ մը կատարութիւննիկ զպեցէք. ու շուտով ետ դառնալով, և առ այժմ ձերանօրէն խորհուրդը մէկգի դրած ատոր վրայ նորէն դատաստան մը ըրէք, և ըսածները հանդարտ հոգևով քննեցէք, որպէս զի կուրաբար զարհուրելի մեզք մը գործած չըլլաք Երկնից դէմ:

Եւ. . . բայց. . . չէ՛ չէ՛, մենք չէինք ըսողը. փո՛ճ տեղը մեր վրայ ալ մի յարձակիք, և անոր վրէժը մեզմէ մի՛ առնէք. . . . Տէ՛, հեռուն կացէք հեռուն. . . . Ե՛յ ինչո՞ւ՞ ատանկ սաստիկ կը զարնէք գլխուսուս ո՛ր անխիղճներ. չար ինչ խօսեցանք, յրցուցէք, վիայեցէք. . . . — Չէ՛, մենք զանի քարկոծելով պիտի սպաննեմք — Որի՞ն փոյթը, կուզէք նէ կախաղանք հանելով սպաննեցէք, ո՞վ ի՞նչ կրնայ ըսել ձեզի. Ենցեալ օր Պետրոսն ալ ընկերներովը հանդերձ լաւ մը « գան հարիք », բայց ՚ի Պատուիրելէն՝ ի՞նչ բան ըսող եղաւ ձեր ըրածին՝ նոյնպէս այժմ ո՞վ ինչ պիտի ըսէ. . . . Տէ՛ ուրեմն, շուտ ըրէք շուտ. պահ մ'առաջ այդ « չի » դիտուողու.

զիկ, ի՞նչ ըսի ես, և ի՞նչ ըրին իմ հուսակեց-
ներս» : Ս' անխիղճ, ի՞նչ, աներեսաբար կոսե-
թէ՝ ինչ ըսի, և ինչ ըրին . . . զեռ ի՞նչ պիտի ը-
սեիր և ինչ պիտի ընեիր . . . Արիք չարիք մեր
սիրելի Սեսիայն ՚ի խաչ հանեցիր, և . . . բայց
ճշմարտոր ըսելով, այդ բանին մեջ բոլորովին յան-
ցանքը ձերը չէր, բայց որում մասնութիւնը իր
աշակերտէն էր, որուն անունն էր Յուզա . և
գիտեք այ թէ, ինչ բանի համար էր :

« Չէ, ես չեմ գիտեր կոր » : Չես գիտեր
կոր . . . եւ եսուն դահեկանի խնդիրը չը գի-
տես հա՞ : « Չէ » :

Լսէ՛ ստախոս լսէ՛ . . . ան ստախով ինչ
գնուեցաւ նէ չկտե՛ս . . . բա՛բէ : « Ի՞նչ բան » :
Ինչ բան . . . կուրանան, կամաւ ուրացող, բա-
նիդ չեկածին անտեղեակ կըլլաս հէ՛ն : սա ու-
տարայ գերեզմաննոցը ի՞նչ է : « Աղէկ, ձերին
ալ ինչո՞ւ քիթերնիդ մեծ է » : Տեսար հիմա,
պատասխան է սա . քու բնական պահութիւն-
ներդ, զոր ահա յայտնի կերեայ, կը լինե՞նք
կոր . ատանկ բաներու վայ է մեր խնդիրը,
մարդ անիրաւ . Մենք զքեզ մարդու տեղ դը-
նելով, ճամբովը բան կը հարցունեմք, ըսածնե-
րուդ սխալանքները ուղղելու համար, դուն խե-
ղեպնալով, մեր քիթին մեծութիւնը երեսնիս կը
դարնես, ատիկայ մարդկութիւնն է : Մենք,
դանձ, դուն Տանձ, յարմարեցա՛ւ . . .

« Յարմարի՛ չի յարմարի՛, ան պէտք չէ մե-
զի . բաւական է որ մէկը մեր օրինաց հակառակ
կը վարուի, և չէ՛ ՚ի մեր կոյս, անանկը մեզի
թշնամի կը համարիմք : Պետրոս, Յովհաննէս,
Ստեփաննոս, և այլն, ամենն ալ կը դրոշմեմք . բո-
լորն ալ մէկ ջրով կը լուամք . և ատանկներուն
ըսածին պատասխան չի տայէն ՚ի վաս՝ զանոնք կը
ճաղընեմք, կը նախատեմք, կը հալածեմք, և ձեռ-
քերնիս անցած ատեն՝ կը տանջեմք, կը խաչեմք .
վերջապէս՝ առանց շունչ առնել տալու՝ անան-
կին վայն ՚ի գլխուն կը բերեմք . ինչպէս ահա մէկ
օրինակն ալ աչքերնիդ առջին կեցած է, դեռ
ըսելիք մը ունիք » :

Չէ՛ չէ՛, բնաւ ըսելիք մը չունիմք, մարդ
չոր և վատ, զի ահա ամեն բան ՚ի բերանոյ քում
մէ գատեցար . այսուհետեւ ի՞նչ բան կարող եմք
ըսելու . . . Արեմն սա՛ մէկ քանի վերջնական
խօսքն ալ ընելով՝ իսպառ հեռանամք քեզմէ, զի
դու պիտիտեքսութեամբ օրկէ հունա երթալիք
չունին : Աստի նախ ըսէ մեզի, ի՞նչ է քու ա-
նունդ . « Իմ անունս Սաւուղ է, Սաւուղ,

Սաւուղ » : Ի՛նչ է՛ հասկցանք, Սաւուղ . ատանկ
անքաղաքալարութեամբ մարդու երեսն ՚ի վեր
չեն պուար Հիմա դու մտադրութեամբ
մը ունիսդիր եզիր մեր վերջն ըսածներուն, և
յետոյ անոնց վրայ մտածէ :

Արդ՝ սակէ մէկ քանի ամիս առաջ դուք,
դուք կըսեմք նէ՛ ՚ի հարկէ՞ գիտես որոնց հա-
մար ըլլալը, մեր այն սիրելի և բարերար Մե-
սիան իբր մեռուցիք, զայն անօրէններուն կար-
գը դատելով, բայց հաստատ գիտցիք՝ որ անիկայ
յաւիտեան կենդանի է, և ունի իշխանութիւն
ու զօրութիւն զձեզ դատելոյ և պատժելոյ,
քանզի անոր խաչին վրայ « Թագաւոր Հրէից »
դրոշմուած է, և չէ եղծանելը Սօտերս
անոր առաքեալներուն՝ որուն արբեայ ըսիք, ու-
րուն յիմար, և որուն տղէտ, առանց զմտաւ ա-
ծելու թէ, անոնք որ կը խօսին, որ հոգւոյ, և
ի՞նչ զօրութեամբ կը խօսին . երկնայի՞ն իմաս-
տութեամբ, թէ արուեստական գիտութեամբ :
Չեր խաւարեալ մօքերը չի կրնալով իմանալ այս
բանը, անոնց քարոզութիւններուն դեմ զայ-
բացար, նախանձեցար, և ինտելեթեամբ,
զանոնք բռնեցիք բանոր դրիք, ծեծեցիք, տան-
ջեցիք, որպէս զի խրեն բերաննին, ու անգամ
մին ալ չի քարոզեն Բայց ահա անուննին
ամեն տեղ կը յիշուի, անոնց դործերուն ու-
վարուցը վրայ, բարձր գովեստներով կը խօս-
ուի Արդարեւ այսօր Ստեփաննոսն ալ մարմ-
նով մեռուցիք, սակայն նա հոգւով կենդանի է,
և այժմ հանգիստ ու ցանկալի երջանկութեան
մը մեջ կը փայլի . և աներկբայ ձեր ըրած ան-
գթութեանը ներելով, ամեն վայրկեան ձեր
հոգւոյն լուսաւորութեանը համար կողոթէ առ-
Աստուած Այժմ անոնցմէ հոս « Արդար »
կոչուած Յակոբ առաքեալ մըն ալ կայ, որ վե-
ճակաւ, տեղւոյս քարոզիչ ընտրուած է ՚ի Ա-
ռաքելոց . մէկ քանի օրէ ՚ի վեր կը լսեմք թէ
անոր վրայօք ալ չարանիւթ մը կը պատրաստուի
սակայն ինչպէս ըսիք, տակաւին ան ալ իր պաշ-
տօնը համարձակ առաջ կը տանի, և յուսալի է
թէ շնորհիւ իւր Արդապետին, անվտանգ կա-
ղապի ձեր լարած չար որոգայթներէն Չկա-
տեմք ան, ոմանք կըսեն թէ գլուխը պիտի կըտ-
րէք, եթէ ձեռուրնիդ անցնի . բնաւ հոգ չէ,
դուք զանիկայ գլխատեցէք, և թող անոր մա-
քուր հոգին երջանկութեան մեջ զուարճանայ,
մենք նորին արիւ Քլուխն ալ յարգութեամբ

րուի, զի զայս՝ չէր որ Պօղոսն կը պատուիրէր, այլ Հոգին Սուրբ, որ ինչպէս ինք, սրբազան Առաքեալը ամեն ատեն կը խոստովանէր « Այլ մեզ յայտնեաց Հոգին Սուրբ՝ ըսելով... »

Եւ այլ ասոնց համաձայն Աստուածահաճոյ իրողութիւններ, որոնք մարդկային ազգի (Հոգեւոր և մարմնաւոր) բարեոք կեցութեանը նպաստելու ամենուղիղ ճամբաներ են, միշտ կը փափաքէինք որ Հայ, ընտրեալ սերունդը այն ճամբաներով յառաջանայ, և անոնցմով լուսաւորուի... »

Ահա համառօտի, մեր ցարդ ունեցած հաստատ և անփոփոխելի գրութիւնն ու զօրաւոր հիմերը, և յուսամք թէ շնորհիւն Աստուծոյ՝ մինչև ցմահ այս գրութեան վրայ, առանց կէտ մը զարտուղելու պիտի մնամք :

Եւ արդ չեմք գիտեր թէ՛ մերին այս կերպ դրութիւնը որո՞ւ վնասակար էր, կամ զ՞ի կըրնար վնասել, երբ աշխարհի չորս գլխաւոր կրօնքից տէր մարդոց մեծագոյն և բարեպաշտ մասին գաղափարը՝ այս օրինակ դրութեան վրայ հաստատուած է, և ըստ այսմ կը գործէն. որ ինչպէս բազմաթիւ օրինակներ ունիմք աչքերնուս առջև : Թողումք այս մասին Ս. Գրոց ցըցուցած սքանչելի վկայութիւններն ու բրած սաստիկ պատուէրները, որոնք որ միշտ Հոգեւորը՝ մեր ամեն գործերուն գլուխն ու առաջնորդը ըլլալը կը հաւատտեն, և առանց անոր դիմելով, (Հոգեւոր և մարմնաւոր) բան մը ընելու, և գլուխ հանելու անկարող ըլլալնիս կիսացունեն : Այս տեղ մենք լռենք, թող ժամանակի անցքերը պատասխանեն, թէ այնպէս է... »

Մնացեալը յաջորդ բերքով :

Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն

Արեւելեան Դարը ներկայ թիւէն՝ իւր Տառնորեսայ հրատարակութենէն դադարած է : (Աւետիս) :

Եւ այս 40^{րդ} թիւէն սկսեալ ամիսը մէկ կամ երկու անգամ հրատարակուելով՝ մինչև 66 թիւը պիտի լրացնէ, ու անկէ վերջը բոլորովն պիտի դադարի : (Աւախութիւն մե՛ծ) :

Եւ որովհետեւ իւր այս երրորդ շրջանին սկիզբէն (որի՛ւն Յուլիս 10, թիւ 31) 30—40 անձինք տարեկան ստորագրուած, և անոնցմէ ոմանք պարտքերնին կանխիկ հատուցած ըլլալուն, յամենայն իրաւունք ունին անոնք, տարի մը ամ

բողջ, այսինքն 36 հատ Արեւելեան Դար պահանջելու, և Արեւելեանն ալ պարտաւորեալ է հատուցանելու : (Մտածութիւն) :

Այսն որոյ, մինչև վերոյիշեալ 66 թիւը լրանալուն դեռ պիտի հրատարակուի Արեւելեանը : (Սակաւիկ մի տրտմութիւն) :

Ուստի, ամեն այն բաժանորդք, որոնք ցարդ ստակ մը չեն վճարած, (բաց ՚ի նախնիքաց շրջաններունը չի վճարողներէն) եթէ բարեհաճին, և եթէ յօժարին, ազատ կամօք, անոր տարեկան կամ վեցամսեայ զինը հատուցանեն, որպէս զի ինդրուած 36 հատ Արեւելեանը (որուն արդէն 10 հատը ընդունած են) շուտով իրենց կողմը խրկուին : (Բարեմալութիւն) :

Բայց և այնպէս, հատուցանեն չի հատուցանեն իրենք, Արեւելեանը, ուշ կամ կանուխ, իր պարտքը պիտի վճարէ, ստակը վճարող բաժանորդաց իրաւունքը տեղը տանելու, և իւր պատիւը պահելու համար : (Տարակուսանք) :

Եւ այս պատճառաւ յատկապէս կը ծանուցուի թէ, Արեւելեանը նորէն բաժանարդ չի կարենայ պիտի ընդունիլ, բայց թէ յօժար կամօք ուզողը, 10 Յուլիս, 31 թիւէն կրնայ ստորագրուիլ Ո. Յ. Բիւրքձեանի Տպարանէն, զի այժմ յատկապէս սենեակ չունի : Եւ ու երբէ, անոր յատուկ նամակ և դրութիւնք, եթէ հարկ ըլլայ, յիշեալ Տպարանը կրնայ ձգուիլ, և պատասխաններն նոյն տեղէն ընդունուիլ : (Հետազօտութիւն) :

Սա ալ այժմէն իմաց կը տրուի թէ, Արեւելեանը այսուհետեւ կարգ մը, խնթ ու խնլառ, ու զինովի փոխունք գրուածներու (որոնք այս միջոցիս իր վրայ կը տեղան) բնաւ պիտի չի պատասխանէ : զի Արեւելեանը զինով եւ մուրացկան Խորհրդի, Գրքերի և Գրքերի հետ երբէք գործ չունի : (Ասիւ) :

Հուսկ յետոյ՝ վերոյիշեալ յանկարծական փոփոխութեանց պատճառները կարգաւ պիտի բացատրուին, որ ինչպէս ներկայ թիւով մէկ երկուքը պարզուած է : (Մեջուխեչան ահանջները անկեց) :

Ներկայ բուռն՝ 88^{րդ} երեսը, երկրորդ էջին, եւ 8^{րդ} տողին վերջը՝ Քելիար բառը ասելորդ է, որն որ Տպագրական սխալմամբ գրուած է հոն :

Խմբագիր—Տնօրէն
Մ. Գ. ՏԵՅԻՐՄԵՆՅԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ո. Յ. ԲԻՒՐԳՁԵԱՆ
ՊՈՍԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ՅԻՃԱՆՁԸԼԱՐ